ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՏԱՐԵՄՈՒՏԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՄԱՂԹԱՆՔԸ

... ՈՐ 1999-Ը ՍԻՐՈ ՀԱՂԹԱՆԱԿՈՎ ԴԱՌՆԱ ԱՐԻՈՒԹՅԱՆ ՈՒ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԻ

Սիրելի հավատավոր ժողովուրդ,

Տարեմուտ է վերստին, հույսերով, բարի սպասումներով լի, Սուրբ Ծննդյան բերկրալի ավետիսով պսակյալ: Ժամանակը, սիրելի հայորդիք, մեկ տարով ևս պտտեց իր շրջանը և մեզ մոտեցրեց նոր՝ երրորդ հազարամյակի շեմին, երբ աշխարհը տոնախմբելու է Քրիստոսի Ծննդյան 2000-ամյան, մեր ժողովուրդը՝ նաև քրիստոնեության պետական կրոն հռչակման իր 1700-ամյան:

Արդարև, նորեկ 1999 թվականը դիմավորում ենք հուսառատությամբ, նոր, լավագույն ակնկալիքներով, որոնց երաշխիքը հաստատված խաղաղությունն է նաև: Մեր ժողովրդի անցնող դժվարին տասնամյակի վաստակյալ ձեռքբերումն է այդ խաղաղությունը, մեր երազանքների իրագործման ճանապարհին՝ մեր զոհաբերությունների անուրանալի արգասիքը: Այսօր բոլորիս ամենամեծ ցանկությունն ու մաղթանքն է, որ թանկ ձեռք բերված խաղաղությունը լինի անբեկանելի, որ այն Բեթղեհեմի Լուսաստղի շողերով հաստատվի նաև յուրաքանչյուր հայորդու կյանքում՝ բերելով հոգու անդորր և հաշտություն:

Դարաշրջանի ողբերգությունները մեր հոգիներում ամբարել են դառնություն, մեր սրտերում կուտակել վիրավորանք, որ առօրյա մեր կյանքում վերածվում են անհանդուրժողության, թշնամանքի մեկս մյուսի, հեռավորի ու մերձավորի, անգամ ինքներս մեր դեմ:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ 1999 թվականը նշանավորվի Սիրո հաղթանակով, հռչակվի և դառնա հաշտության տարի, որպեսզի մեր հոգիները փարատվեն դառնությունից, որպեսզի

ողորմածությունը, գթասրտությունը, արիությունն ու արդարամտությունը լինեն մեր կյանքի ուղեկիցները՝ օգնելով մեզ ու բարգավաճ դարձնելու անկախացյալ մեր Հայրենիքը՝ որպես վկայություն, որ մենք գտել ենք հաշտությունը ինքներս մեզ և Աստծո հետ:

«Շնորհք, Սէր, Խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ և ընդ ամէնեսեանս, ամէն»:

Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ:

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ,
Մեզ և ձեզ մեծ աւետիս:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ